28 Հիսուսն է հույսը սրտերի

1. Հիսուսն է հույսը սրտերի
Կյանքում այս ծանր ու դաժան,
Որոնց Նա սրբեց մեղքերից,
Երբ խաչվեց անմեղ ու արդար:
Սուրբ Հայրը Որդուն միածին
Զոհեց մեր փրկության համար:

Անցա՛ն տասնյակ դարեր խավար,
Մինչ Նա թափեց արյունը սուրբ,
Արյամբ գնեց մի ժողովուրդ,
Դարձավ նրա հույսը անմար:

2. Ով ճանաչեց Հոր սերը սուրբ,
Տենչում է նա սիրել անվերջ,
Սիրել անգամ արցունքի մեջ,
Սիրել սիրով Հիսուսի սուրբ,
Հալածողին ու թշնամուն
Սիրել, ինչպես Հիսուսը սուրբ:

3. Թող պարծենա աշխարհը չար,
Ինքն իր աչքին թվա ուժեղ,
Քո դեմ միայն ծուխ է, մղեղ,
Քամուց քշված՝ անզոր, անկար:
Պարծենում եմ քեզնով Հիսուս (2):

4. Ո՞վ կարող է մեզ բաժանել
Օրհնյալ Փրկչի սիրուց անհուն,
Մեզ չի կարող մահն էլ զատել,
Եվ ոչ մի ուժ՝ այս մութ կյանքում:
Հիսուսն է մեր վահանն անբեկ,
Նա է հոգին մեր ամոքում: